Հավելված N 2
Արցախի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2019 թվականի դեկտեմբերի 18-ի
N 359 հրամանի

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

N	Ծառայության տեսակը (անվանումը)	Ծառայության իրականացման ժամկետը	Ծառայություն ստանալու համար դիմելու և մատուցման արդյունքի տրամադրելու ձևերը	Ծառայության մատուցման արդյունքը	Ծառայության մատուցման իրավական հիմքերը
1. Հարկ վճարողների համար հաշվառումների, գրանցումների, հաստատումների, վավերացումների և այլ գործընթացների իրականացում					
1	Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հաշվառում	Անհրաժեշտ փաստաթղթերի ստացումից հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Հարկ վճարողի հաշվառման համար և հարկ վճարողի հաշվառման վկայական: Հարկ վճարողը հաշվառված է հարկային մարմնում՝ միասնական գրանցամատյանում	«Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» օրենք, ԼՂՀ կառավարության 17.05.2016թ. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման դիմումի ձևը, դրանում լրացման ենթակա տվյալների ցանկը, հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը և դրանում պարունակվող տեղեկությունների ցանկը սահմանելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 239-Ն որոշում
2	Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի հաշվառումից հանում	Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին հաշվառումից հանելու համար նրա մահվան փաստը հավաստող՝ երրորդ անձի ներկայացրած փաստաթղթի ներկայացումից հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Միասնական գրանցամատյանում ֆիզիկական անձի վերաբերյալ համապատասխան գրառում	«Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» օրենք

3	ԱՀ-ում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանք ստանալու համար դիմումի ընդունում և տեղեկանքի տրամադրում	Դիմումը ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում	Թղթային՝ առձեռն	ԱՀ-ում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի կամ եկամտային հարկի մասին տեղեկանքի տրամադրում, գրավոր մերժում	«Շահութահարկի մասին» օրենք, «Եկամտային հարկի մասին» օրենք, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» օրենք, ԱՀ ֆինանսների նախարարի 27.08.2019թ. «Արցախի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի կամ եկամտային հարկի մասին տեղեկանքի ձևը սահմանելու մասին» N 241-Ն հրաման
4	Արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) արտոնագրի տրամադրում	Դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրը	Թղթային	Արտոնագրի տրամադրում	«Արտոնագրային վճարների մասին» օրենք
5	Առևտրի հարկի, հաստատագրված վճարի կամ արտոնագրային վճարի կատարումից եռամսյա ժամկետով ազատվելու մասին հավաստագրի տրամադրում	Դիմումն ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային՝ առձեռն Պատվիրված նամակով	Հավաստագրի տրամադրում, հավաստագրի տրամադրման մերժում	«Հարկերի մասին» օրենք, ԼՂՀ ֆինանսների նախարարի 11.01.2016թ. «Հարկ վճարողների հավաստագրման կարգը սահմանելու մասին» N 5-Ն հրաման
6	Հսկիչ-դրամարկղային մեքենայի՝ հարկային մարմնում գրանցում և գրանցումից հանում	ՀԴՄ-ի գրանցման դիմումը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին դիմում ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում	Թղթային	Դիմումի բավարարում՝ ՀԴՄ-ի գրանցում, կապարակնքում կլոր կնիքով, ՀԴՄ-ի և ներկայացված փաստաթղթերի բնօրինակների վերադարձ հարկ վճարողին, ՀԴՄ-ի գրանցման քարտի տրամադրում հարկ վճարողին	ԼՂՀ կառավարության 26.04.2005թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգը և շահագործման կանոնները հաստատելու մասին» N 211 որոշում
7	Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տրամադրում և հետ ընդունում	Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Ակցիզային դրոշմանիշերի տրամադրում, հայտի մերժում կամ մասնակի բավարարում	«Ակցիզային հարկի մասին» օրենք
		Դրոշմապիտակների	Թղթային	Դրոշմապիտակների	«Առևտրի և ծառայությունների մասին»

		ձեռքբերման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում		տրամադրում կամ հայտի մերժում	օրենք
		Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը վերադարձվում են դրանց ձեռքբերման օրվանից մինչև 3-ամսյա ժամկետը լրանալու օրը ներառյալ, վերադարձման դիմումն ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի հետ ընդունում կամ մերժում	ԼՂՀ կառավարության 11.07.2000թ. «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N 138 որոշում
		Չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են արտադրությունը դադարեցնելու ամսվան հաջորդող 3-ամսյա ժամկետում կամ կիրառությունից հանելու վերաբերյալ ԱՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3-ամսյա ժամկետում, վերադարձնելու մասին դիմումը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Չօգտագործված դրոշմապիտակների հետ ընդունում կամ մերժում	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենք
		Վնասված դրոշմապիտակները վերադարձվում են յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, վերադարձնելու մասին դիմումը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Վնասված դրոշմապիտակների վերադարձ կամ մերժում	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենք
8	Հարկային մարմնում դրամարկղային գրքերի հաշվառում	Հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Կնքված, համարակալված և թելակարված դրամարկղային գիրք, դրամարկղային գրքի վերադարձ՝ տեղեկացնելով	ԼՂՀ կառավարության 29.11.2004թ. «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 477 որոշում

				գիրքը չգրանցելու հիմքերի մասին	
9	Հարկային մարմնում առաքումների և հասույթի գրանցման գրքերի հաշվառում	Հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային Էլեկտրոնային	Կնքված, համարակալված և թելակարված առաքումների և հասույթի գրանցման գիրք, առաքումների և հասույթի գրքերի վերադարձ՝ տեղեկացնելով գիրքը չգրանցելու հիմքերի մասին Ծանուցում՝ էլեկտրոնային գրքերի հերթական համարների վերաբերյալ կամ մերժման վերաբերյալ	ԼՂՀ կառավարության 26.12.2000թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) և վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N 255 որոշում
10	Առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման գրքերի հաշվառում	Հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 1 օրացուցային օրվա ընթացքում	Թղթային	Կնքված, համարակալված և թելակարված առևտրի հարկ վճարողների եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք, առևտրի հարկ վճարողների եկամուտների և ծախսերի հաշվառման գրքի վերադարձ՝ տեղեկացնելով գիրքը չգրանցելու հիմքերի մասին	ԼՂՀ կառավարության 20.08.2002թ. «Առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման կարգի մասին» N 206 որոշում
11	Դրոշմանիշային վճար վճարողներին դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքների տրամադրում	Դիմելու օրվանից հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային՝ առձեռն	Տեղեկանք՝ «Անձի կողմից նախորդ մեկ տարվա ընթացքում վճարված (անձի եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) դրոշմանիշային վճարների չափի մասին»	«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենք, ԱՀ կառավարության 15.06.2018թ. ««Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 463-Ն որոշում
2. Հարկ վճարողների իրազեկում					
12	Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մասին հանրային իրազեկում	Իրավական ակտի տեղադրում՝ իրավական ակտի պաշտոնական հրապարակման ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը,	Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում պաշտոնական հաղորդագրություն հրապարակելու,	Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում պաշտոնական հաղորդագրության հրապարակում, իրավական	ԼՂՀ ԿԱ ՀՊԾ 29.06.2009թ. «Հարկային մարմնի ինտերնետային պաշտոնական կայքի ստեղծման և գործարկման անհրաժեշտ միջոցառումների իրականացման մասին» N 39/Ա հրաման

		պաշտոնական հաղորդագրության տեղադրում՝ տասնօրյակային կտրվածքով՝ մինչև տասնօրյակին հաջորդող 1-ին աշխատանքային օրը	իրավական ակտերը տեղադրելու միջոցով	ակտերի տեղադրում	
13	Հարկ վճարողներին և (կամ) այլ անձանց հարկ վճարողների իրավունքների ու պարտականությունների, ներառյալ՝ դրանց փոփոխությունների պարզաբանման՝ իրազեկման գործընթաց	Բանավոր դիմումի դեպքում՝ դիմումն ստանալուց անմիջապես հետո, իսկ գրավոր դիմումի դեպքում՝ դիմումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Գրավոր դիմումի կապակցությամբ իրավասու այլ մարմին հարցում կատարելու անհրաժեշտության դեպքում դիմումի կատարման ժամկետը կարող է հետաձգվել ևս 15 օրով	Ազատ ձևաչափով	Իրազեկում, իրազեկում չիրականացվելու պատճառի և հիմքի նշմամբ տեղեկանք	«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» օրենք
14	Հարկ վճարողների ցանկերի հրապարակում	Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը	Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկեր	Հաշվետու տարվա արդյունքներով 1 մլն ՀՀ դրամ և ավելի հարկային վնասներ հայտարարագրած հարկ վճարողների ցանկեր Հաշվետու տարվա արդյունքներով 1 մլն ՀՀ դրամ և ավելի ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկեր Հաշվետու տարվա արդյունքներով ԱՀ պետական բյուջե 10 մլն ՀՀ դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկեր Հաշվետու տարվա արդյունքներով ԱՀ պետական բյուջե 10 մլն ՀՀ դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկեր Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկեր	«Հարկերի մասին» օրենք, ԼՂՀ կառավարության 31.07.2006թ. «Հարկային մարմնի կողմից հարկ վճարողների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» N 400 որոշում

		Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը		Առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկեր և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծություններ՝ հաշվարկված աճողական կարգով	
				Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների 3 և ավելի խախտում թույլ տված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկեր	
		Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը		Օրինապահ հարկ վճարողների ցանկեր	ԼՂՀ ֆինանսների նախարարի 07.03.2017թ. ««Օրինապահ հարկ վճարողներ»-ի ցանկերի ձևավորման մասին» N 89 հրաման
3. Հարկային հաշվարկների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի ընդունում և (կամ) տրամադրում					
15	Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացնելու մասին պայմանագրի կնքում, էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի տրամադրում	ԷՆՊ-ի լրացում և կնքում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, ԷՆՊ կնքելուց հետո օգտվողի մուտքի անվան և գաղտնաբառի տրամադրում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային Առձեռն՝ փակ ծրարով	Հարկային մարմնի հետ կնքված՝ «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին» պայմանագիր	«Հարկերի մասին» օրենք, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենք, ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 22.01.2014թ. «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» N 4-Ն հրաման
16	Հարկային հաշվարկների ընդունում	1) Էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ հարկային հաշվարկի ներկայացմանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում 2) Առձեռն ներկայացնելու դեպքում՝ ներկայացնելու պահին և ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրում մուտքագրում հարկային մարմնի տեղեկատվական բազա 3) Փոստային կապի միջոցով	1) Էլեկտրոնային 2) Թղթային՝ առձեռն 3) Փոստային կապի միջոցով	1) Հարկային հաշվարկի ստացումը և գրանցումը հավաստող էլեկտրոնային ծանուցում 2) Հարկային հաշվարկի երկրորդ օրինակի դրոշմակնքումը և ընդունման ամսաթվի նշումը՝ ծառայություն ստացողի ցանկությամբ հաշվարկի թղթային տարբերակը 2 օրինակից առձեռն ներկայացված լինելու դեպքում	«Հարկերի մասին» օրենք, ԼՂՀ ԿԱ ՀՊԾ 30.05.2005թ. «Հարկ վճարողների և ապահովադիրների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների, հայտարարագրերի, հայտարարությունների և տեղեկությունների ընդունման, հետագա օգտագործման համար մշակման կարգը հաստատելու մասին» N 58/Ղ հրաման, ԱՀ ՖՆ տեղեկալի 25.02.2016թ. N 1-2/233 հանձնարարական գրություն

		ամսական հաշվարկ ներկայացնելու դեպքում՝ հնգօրյա, իսկ եռամսյակային, կիսամյակային, տարեկան հաշվարկները՝ տասնօրյա ժամկետում և մուտքագրում հարկային մարմնի տեղեկատվական բազա		3) Փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպի առկայությունը	
17	Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա՝ օրենքով սահմանված եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի և եկամտային հարկի մասին ու գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին տեղեկանքների տրամադրման դիմումների ընդունում և հաստատում	Դիմելու օրվա դրությամբ հարկային պարտավորությունները կատարելուց հետո	Թղթային՝ փոստային առաքմամբ կամ առձեռն	Տեղեկանք	«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի մասին» օրենք, ԼՂՀ կառավարության 14.03.2012թ. ««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 395 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 110-Ն որոշում
18	Հարկ վճարողի (բացառությամբ հաստատագրված վճար վճարողի) գործունեության սկսման (վերսկսման) կամ դադարեցման վերաբերյալ դիմում-հայտարարությունների ընդունում	Հարկ վճարողի դիմում ներկայացնելու օրվանից	Թղթային՝ փոստային առաքմամբ կամ առձեռն, էլեկտրոնային՝ e-taxpayer բջջային հավելվածի միջոցով	Հարկային մարմնի տեղեկատվական բազայում համապատասխան գրառում	ԱՀ ֆինանսների նախարարի 18.12.2019թ. «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը, ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետները և տրամադրման ձևերը հաստատելու մասին» N 359 հրաման
19	Հաստատագրված վճար վճարողի գործունեության սկսման (վերսկսման) կամ դադարեցման վերաբերյալ դիմում-հայտարարությունների ընդունում	Հարկ վճարողի դիմում ներկայացնելու օրվանից	Թղթային՝ փոստային առաքմամբ կամ առձեռն	Հարկային մարմնի տեղեկատվական բազայում համապատասխան գրառում	«Հաստատագրված վճարների մասին» օրենք, ԼՂՀ հարկային պետական վարչության 18.06.1999թ. «Հաստատագրված վճարների մասին ԼՂՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգչական նամակը հաստատելու մասին» N 11

					հրաման
20	Հարկ վճարողի դիմումի հիման վրա հարկային պարտավորությունների ճշտում	Հարկ վճարողի դիմում ներկայացնելու օրվանից	Առձեռն, էլեկտրոնային եղանակով կամ փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով	Հարկային պարտավորությունների ճշտման գործընթացի վարույթի հարուցում	«Հարկերի մասին» օրենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենք, ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 12.05.2014թ. «Հարկ վճարողի հարկային պարտավորությունները ճշգրտելու կարգը և եզրակացության ձևը հաստատելու մասին» N 9-Ն հրաման
		Հարկ վճարողի դիմումի ստացման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում		Տվյալների ուսումնասիրություն	
		Եզրակացության արդյունքներով վերահաշվարկ կատարելու անհրաժեշտության դեպքում ուսումնասիրության ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա (անուղղակի հարկերի մասով՝ 11 աշխատանքային օրվա) ընթացքում	Առձեռն կամ փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով	Հարկ վճարողի հարկային պարտավորությունները ճշտելու մասին եզրակացություն, ճշտման գործընթաց չիրականացնելու վերաբերյալ համապատասխան գրության տրամադրում՝ նշելով ճշտման գործընթաց չիրականացնելու հիմքը	
21	Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	Հարկ վճարողի դիմումը ստացվելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային՝ առձեռն	Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, հարկ վճարողի կողմից հարկային հաշվարկ չներկայացնելու հետևանքով՝ դիմումով պահանջվող տեղեկատվությանը չտիրապետելու մասին հարկային մարմնի տեղեկանք	«Գնումների մասին» օրենք, «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» օրենք
4. Օրենքներով սահմանված կարգով վերադարձման ենթակա համարված հարկերի և վճարների գումարների վերադարձ					
22	Դրոշմանիշային վճարների պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարների վերադարձ	Դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային՝ առձեռն	Սահմանված չափից ավելի վճարված գումարի վերադարձման մասին եզրակացություն, դիմումի մերժում	ԱՀ կառավարության 15.06.2018թ. ««Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 463-Ն որոշում
		Եզրակացությունների հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային	Վճարողների ավելի վճարված դրոշմանիշային վճարների գումարների վերադարձի մասին ամփոփ տեղեկանք	

23	Վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձման գործընթաց	Դիմումը եկամտային հարկի գումարը վերադարձնելու հիմք հանդիսացող փաստաթղթերի հետ միասին ներկայացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Եզրակացություն, մերժման ծանուցում	«Եկամտային հարկի մասին» օրենք, ԼՂՀ կառավարության 26.05.2015թ. «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 306-Ն որոշում
		Ոչ ուշ, քան եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը	Էլեկտրոնային	Վճարման հանձնարարականի կազմում և ներկայացում գանձապետարան, մերժման հիմքերի մասին կազմված տեղեկանք	ԼՂՀ ֆինանսների նախարարի 27.03.2017թ. «Եկամտային հարկի գումարների վերադարձման համար նախատեսված դիմումի և եզրակացության ձևերը սահմանելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2015 թվականի հունիսի 15-ի N 3-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 111-Ն հրաման, ԼՂՀ ֆինանսների նախարարի 29.03.2017թ. «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի կանոնակարգման ու պատասխանատուների նշանակման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2015 թվականի հունիսի 26-ի N 72-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 117 հրաման
5. Գումարների մուտքագրում					
24	Մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված)՝	Առաջին անգամ վերադարձվող գումարի առկայության մասին մասնակիցներին ծանուցվում է՝			«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենք, ԱՀ ֆինանսների նախարարի 05.08.2019թ. «Մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված)

	սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձման նպատակով հարկ վճարողներին ծանուցումների ուղարկում և ստացած տվյալների մուտքագրում	1)հաշվետու ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկով և (կամ) հաշվետու տարվա տարեկան եկամուտների մասին հաշվարկով հաշվարկված սոցիալական վճարի մարման օրվանից հետո տասնօրյա ժամկետում.	Էլեկտրոնային փոստի միջոցով, փոստային առաքմամբ	Ծանուցում	եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված)՝ սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու կարգը սահմանելու մասին» N 215-Ն հրաման
		2) անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում: Առաջին անգամ վերադարձվող գումարը մասնակցին փոխանցելու նպատակով հարկային մարմինը մասնակցի կողմից իր բանկային տվյալները հարկային մարմին ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում գանձապետարան է ներկայացնում վճարման հանձնարարական: Հետագայում վերադարձվող գումարի առաջացման դեպքերում հարկային մարմինը մասնակցին չի ծանուցում, իսկ վճարման հանձնարարականը գանձապետարան է ներկայացնում վերադարձվող գումարի առաջացման օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային	Վճարման հանձնարարական	
		Հանձնարարականը ներկայացնելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում	Բանկային փոխանցում	Վերադարձվող գումարը փոխանցված է մասնակցի բանկային հաշվին	
6. Հսկողություն					
25	Բյուջեի հետ փոխհարաբերությունների	Հարկ վճարողին հարկային ստուգման հանձնարարագրի	Առձեռն կամ փոստով	Ստորագրված հանձնարարագիր՝ հարկ	«Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և

	և հարկային մարմնի կողմից վերահսկվող Արցախի Հանրապետության օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում	ներկայացում ծանոթացման՝ ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ		վճարողի կողմից հաստատում, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին	անցկացման մասին» օրենք
		Հարկ վճարողի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ յուրաքանչյուր տարվա համար: Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օրով, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 500.0 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած և (կամ) 50.0 մլն դրամ և ավելի հարկի գումար վճարած տնտեսավարող սուբյեկտների մոտ մինչև 20 անընդմեջ աշխատանքային օրով (չհաշված կասեցման ժամկետը): Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 500.0 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ	Ստուգում	Ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ստուգման ժամկետի կամ հրամանով ստուգման երկարաձգված ժամկետի ավարտի օրը ներառյալ, ստուգման ժամկետի երկարաձգման մասին տեղեկացում հարկ վճարողին՝ ներկայացնելով հրամանի պատճենը	

		հայտարարագրած և (կամ) 50.0 մլն դրամ և ավելի հարկի գումար վճարած տնտեսավարող սուբյեկտների համար՝ 45 անընդմեջ աշխատանքային օրը			
		Ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգումն իրականացնող անձը ամփոփում է ստուգման արդյունքները: Կազմված տեղեկանքի կամ ակտի՝ ստուգում իրականացնող անձանց կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացում հարկ վճարողին	Առձեռն կամ փոստով	Խախտումներ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտ	
26	Ապրանքանյութական արժեքների հայտարարագրի ընդունում	Սահմանված կարգով հայտարարագրում հսկիչ կետում կամ ներմուծման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի (կիսաֆաբրիկատների) դեպքում՝ մինչև ապրանքների վաճառքի հանելը, բայց ոչ ուշ, քան մինչև ներմուծման օրվանից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում	Թղթային	Ներմուծման հայտարարագրի ընդունում	ԼՂՀ ԿԱ ՀՊԾ 20.07.2009թ. «Տնտեսավարող սուբյեկտների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքանյութական արժեքների հաշվառման քարտերի ձևերը սահմանելու մասին» N 19/Ն հրաման
7. Այլ ծառայություններ					
27	Հարկային մարմնի «Թեժ գիծ» տեղեկատվական ծառայության միջոցով ստացված հարցադիմումների ընդունում և մշակում	Աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-18:00, ընդմիջում՝ 13:00-14:00	Հեռախոսային կապ, էլեկտրոնային, ըստ անհրաժեշտության՝ բանավոր	Հեռախոսազանգի, էլեկտրոնային փոստի կամ առերես անմիջական զրույցի միջոցով պատասխանի տրամադրում	ԼՂՀ ԿԱ ՀՊԾ 18.04.2011թ. «Հարկային մարմնի «Թեժ գիծ» տեղեկատվական ծառայության միջոցով ստացված հարցադիմումների մշակման ընթացակարգը հաստատելու մասին» N 28-Ա հրաման
28	Հարկային մարմնի «Սկայպ» հեռաձայնային ծառայության միջոցով	Երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 11:00-13:00	Իրական ժամանակում առցանց եղանակով, էլեկտրոնային	Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները	ԼՂՀ ֆինանսների նախարարի 22.12.2016թ. «Հարկային մարմնի «Սկայպ» հեռաձայնային ծառայության

	ստացված հարցադրումների ընդունում և ընթացքավորում			կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ իրազեկումներ	միջոցով ստացված հարցադրումների ընդունման և ընթացքավորման ընթացակարգը հաստատելու մասին» N 587 հրաման
29	Ցանկություն հայտնած նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կազմակերպում	Մեկ տարվա ընթացքում՝ առնվազն երկու անգամ	Թղթային՝ հարցման թերթիկ, այցելություն հարկ վճարողի գտնվելու վայրը	Այցելություններ՝ ըստ ժամանակացույցի, իրազեկման թերթիկներ, ցուցումներ՝ հարկային հաշվարկների լրացման և հարկային մարմին հանձնման ընթացակարգերի վերաբերյալ	ԼՂՀ ֆինանսների նախարարի 14.03.2016թ. «Նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգը հաստատելու մասին» N 116 հրաման
30	Հարկ վճարողների ընդունելություն	ԱՀ ֆինանսների նախարար Արթուր Հարությունյանի մոտ ընդունելություն՝ յուրաքանչյուր ուրբաթ աշխատանքային օր՝ ժամը 16:00-18:00, ԱՀ ՖՆ տեղակալ Արայիկ Դոլուխանյանի մոտ ընդունելություն՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ աշխատանքային օրեր՝ ժամը 16:00-18:00, ԱՀ ՖՆ արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության վարչության պետի մոտ ընդունելություն՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ԱՀ ՖՆ հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների ղեկավարների մոտ ընդունելություն՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ԱՀ ՖՆ հարկային վարչարարության մեթոդաբանության և հարկ վճարողների իրազեկման բաժնի պետի մոտ ընդունելություն՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 16:00-18:00	Ընդունելություն	Ընդունելության արդյունքների վերաբերյալ նշում ընդունելության գրանցամատյանում	ԱՀ ֆինանսների նախարարի 18.12.2019թ. «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը, ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետները և տրամադրման ձևերը հաստատելու մասին» N 359 հրաման
31	Տեղեկատվության	Բանավոր հարցման դեպքում՝	Բանավոր, գրավոր	Բանավոր պատասխան,	«Տեղեկատվության ազատության

	ազատության ապահովման ոլորտում հարցումներին պատասխանում	հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում. 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում. 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում. 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը		գրավոր պատասխան	մասին» օրենք